ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Digitally signed by PAPIKYAN PERTSH 1601750048
Date: 2020.09.03

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 Սեպտեմբերի 2020 թվականի N 44

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43 - րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 7 - րդ հոդվածի 4 - րդ կետով, ՀՀ Կառավարության 23.07.2015թ. - ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. - ի թիվ 2387 որոշումը և Լոռու մարզպետի 27.08.2020թ - ի թիվ N 01 /111.4/09005-2020 գրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-021-0044-0036 կադաստրային ծածկագրով 0.03329 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-021-0044-0036 կադաստրային ծածկագրով 0.03329 հա մակերեսով հողամասին տալ 2 փողոց 53/1 փոստային հասցեն:
3. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող անհրաժեշտ փոփոխություն:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» Սեպտեմբերի 2020 թվականի N 45

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 – րդ հոդվածի 1 – ին մասի 24 – րդ կետին, 48 - րդ հոդվածի 1 - ին մասի 3 - րդ կետին, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24 – րդ հոդվածի 1 – ին մասի 3 կետին, Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 17 - ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 4 - Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 24 – ի թիվ 4 եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ

2020 թ. Սեպտեմբերի 1
գ. Արևաշող

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի
2020 թվականի Սեպտեմբերի 1 – ի N 45 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/հ | Ազգանուն անուն հայրանուն | Տրամադրվող գումարը /թվով/ | Տրամադրվող գումարը /բառերով/ ՀՀ դրամ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Մուրադյան Սպարտակ Հրաչիկի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 2. | Ափիցարյան Խանում Ռուբենի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 3. | Դարչինյան Աիդա Անուշավանի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 4. | Հակոբջանյան Սամվել Ռազմիկի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 5. | Խաչատրյան Գայանե Համլետի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 6. | Ընդամենը՝ | 125000 | Մեկ հարյուր քսանհինգ հազար | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ